ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մայիսի 2022թ. թիվ 256-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի ԹԻՎ 231-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Պետական ուսումնական հաստատության» կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 6-րդ կետի 2)-րդ և 5)-րդ ենթակետերը և 9-րդ կետի 2)-րդ ենթակետը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Խնկոյանի հիմնական դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Լուսաղբյուրի միջնակարգ դպրոց» և «ՀՀ Լոռու մարզի Սարալանջի Հ. Թումանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմնի՝ միացյալ խորհրդի նախագահի 11.05.2022թ. թիվ 24 և ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավարի 16.05.2022թ. թիվ 1304 գրությունները՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2021թ. մայիսի 10-ի «ՀՀ Լոռու մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների խորհուրդների կազմերը հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի մարտի 15-ի թիվ 75-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 231-Ա որոշման 2-րդ հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. «9. «ՀՀ Լոռու մարզի Խնկոյանի հիմնական դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Լուսաղբյուրի միջնակարգ դպրոց» և «ՀՀ Լոռու մարզի Սարալանջի Հ.Թումանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ» մասում «Մարտիրոսյան Արփինե» բառերը փոխարինել «Նահապետյան Մարինե» բառերով, իսկ «Մազմանյան Համլետ» բառերը՝ «Խառատյան Անուշավան» բառերով:

2. «9.1. «ՀՀ Լոռու մարզի Լուսաղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ» մասում «Դուրգարյան Անահիտ» բառերը փոխարինել «Սողոմոնյան Վարդան» բառերով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Invalid signature

X

ԳՈՌ ԱՍՐՅԱՆ

Գ.ԱՍՐՅԱՆ

2022թ. մայիսի 17
ք.Վանաձոր